Описаніе Кавказской Выставки Предметовъ Сельскаго Хозяйства и Промышленности въ городѣ Тифлисѣ въ 1889 году». Выпускъ первый. Тифлисъ 1890 г. Типографія А. А. Михельсона, 4-ածալ. 400 երես, գինը 2 բուբլի։ (1889 թուի Կովկասեան արդիւնահանդէսի նկարագրութիւնը)։

Կովկասեան արդիւնահանդէսը, որ տեղի ունեցաւ անցեալ տարի Թիֆլիսում, մնացած էր մինչև այժմ առանց մասնագիտական նկարագրութեան և քննութեան։ Կովկասի Գիւղատնտեսական Ընկերութիւնը այժմ լոյս է ընծայել նկարագրութեան առաջին հատորը, որ բաղկացած է 400 երեսից։ Շատ ուրախալի է այդ գրքի երևալը։ Նա մի կողմից ներկայանում է հասարակութեան և պետութեան առաջ՝ իբրև մի տեսակ հաշիւ արած գործերի և մսխած գումարների մասին, իսկ միւս կողմից նա տալիս է վաղուց սպասուած և ցանկալի գնահատութիւն արդիւնահանդէսի բաժինների։

Ցուցահանդէս կազմողները նպատակ էին դրել պարզելու տեղական գիւղատնտեսութեան և արդիւնագործութեան արդի դրութիւնը և կարծիքները, ծանօթացնելու հետաքրքրողներին տեղական արդիւնաբերութեան օրինակների հետ, տեղական արդիւնագործողների մէջ շարժել եռանդ և մրցում և ծանօթացնելու այդ արդիւնագործողներին կատարելագործած գործիքների և աւելի նուրբ ու կատարեալ արդիւնաբերութիւնների հետ։

Գիւղատնտեսական Ընկերութեան լոյս ընծայած գիրքը պէտք է մասամբ պարզի մեզ համար թէ մինչև որ աստիճան Ընկերութիւնը հասած է իրան համարում իւր մտադրածին։

Ներկայ առաջին հատորը պարունակում է հետևեալ գլուխները։ Ա) Կովկասեան արդիւնահանդէսը կազմելու միջոցների տեսութիւնը։ Բ) Կարգադրիչ Մասնաժողովի անձնական կազմութիւնը։ Գ) Պարգևատացների ցուցակը։ Դ) Պարգևների հանդիսաւոր հրատարակումը։ Ե) Ճառախօսութիւնները։ Զ) Արդիւնահանդէսի դրամական հաշիւը։ Է) Հանդիսաբերների, ցուցաւարկանների և պարգևների մասին վիճակագրական թուերը։ Ը) Լեռնային բաժնի նկարագրութիւնը։ Թ) Անտառաբանական բաժնի նկարագրութիւնը։ Ժ) Երկրագործական գործիքների և մեքենաների բաժնի նկարագրութիւնը և փորձառական լանձնաժողովի զեկուցումը և Ի) Այգեգործական ու պարտիզպանական բաժնի նկարագրութիւնը։

Առաջին լօղուածը պատկանում է Գիւղատնտեսական Ընկերութեան փոխ-նախագահ Կուչաեւին, որ աշխատում է կարճ կերպով ծանօթացնել արդիւնահանդէսը կազմելու նպատակների և նորան իրագործելու միջոցների մասին։ Իւր լօղուածի վերջում նա բնաորոշում է արդիւնա-

հանդէսը հետևեալ ընդհանուր գծերով։

Առաջին Կովկասեան գիւղատնտեսական և արդիւնագործական հանդէսը սղմած կերպով ներկայացրեց Կովկասի բնական հարստութիւնների և նորա արդի արգաւանդութեան լիակատար և բազմերանգ պատկերը։ Նորա ամենայն մի բաժինը կրելով իւր վերայ առանձնակի բնաւորութեան կնիքը, միևնոյն ժամանակ հպատակուած էր խիստ համակարգութեան։

Արդիւնահանդէսի կրթական նշանակութիւնը չէր սպառւում այն տեղեկութիւններով, որ իւրաքանչիւր լաճախորդ կարող էր ստանալ կատարելագործուած արդիւնագործութիւնը տեսնելուց, այնտեղ. բացի այդ՝ մասնագիտական տեղեկութիւններ և գիտութիւն էին մատակարարում՝ արդիւնահանդէսում տեղի ունեցած դասախօսութիւնները, զանազան բաժինների վերաբերեալ փորձերը և ցոյցերը։

Չի կարելի ասել, որ Կովկասեան արդիւնահանդէսը չունէր ե իւր պակասութիւնները։ Հանդիսաբերների կենդանի ինքնուրոյնութեան օրինակներ արդիւնահանդէսը քիչ տուեց։

Գիւղական դասակարգերը բաւականաչափ հետաքրքրուած չէին արդիւնահանդէսի գաղափարով։ Դորա պատճառը մասամբ այն վհատութիւնն էր, որ տիրել էր երկրին՝ անբերրիութեան, խաղողաորթի հիւանդութիւնների, կալածքների պարտքի տակ ընկնելու և ուրիշ նոյնատեսակ հանգամանքների չնորհիւ, իսկ մասամբ բնիկների և առաւելապէս մահմեդականների սառնասրտութիւնը և անշարժութիւնը։ Մահմեդական ժողովուրդը, որ կազմում է Անդրկովկասի 40%, և որին պատկանում է երկրի հողային լաւ մասը, չատ է աւանդական իւր բոլոր գործառնութիւնների, իւր նիստ ու կացի մէջ։ Եւ այդ հանգամանքի արտափայլումն էին նորա հանդէս բերած ցուցառարկաները։

Նշանաւոր են Ջօրջաձէի խօսքերը Կովկասի գինու արդիւնաբերութեան մասին. նա ասաց. «ափսոս դեռ չենք կարող պարծենալ գինեգործութեան արդի դրութիւնով, որովհետև մեր երկիրը, որ համարեա թէ հաւասար է Ֆրանսիայի գինեգործական մասին, արտադրում է տարեկան միայն 10 միլիոն վեդրո դինի, մինչդեռ Ֆրանսիան, որ երկրագնդիս բոլոր շուկաներում պատուաւոր տեղ է բռնել իւր գիններով, նոյն իսկ ֆիլոքսերան երևալուց չետ, ունի տարեկան 300 միլիոն վեդրո։ Մեր երկիրն էլ կարող է հասնել այդ 300 միլիոնին. և այն ժամանակ այդ խոշոր գումարը կը բաշխի մեր բոլոր երկրին և իւրաքանչիւր նոր ռուբլին կը հասնի և մեր գիւղացուն։ Երկրի համար մեծ բարիք է այնպիսի արդիւնաբերութեան զարգացումն, ուր աշխատանքը և դրամը չեն կենդրոնանում, այլ բաժան բաժան են լինում չատ աշխատաւորների վերա»։—Կովկասեան արդիւնահանդէսը ցոյց տուեց, որ չերամապահութիւնը, որ գտնում էր վերջին ժամանակներս ընկած դրութեան մէջ, այժմ զարթնել է անշարժութիւնից և անում է նշանաւոր քայլեր դէպի առաջ։—Կովկասը, որ իւր բնական հարուստ արօտներով բռնում է

աշխարհումս գուցէ առաջին տեղը, դեռ քիչ ունի բարեկարգուած կաթնատնտեսութիւն (իւղագործութիւն և պանրագործութիւն)։ Վերջինս կատարելագործուած ձևեր է ստացել միայն մի քանի դաստակերտներում, ինչպէս Կուչենբախի կալուածքում։ Արդիւնահանդէսը ցոյց տուեց, որ Կովկասի ժողովուրդը լամենալն դէպս սկսել է նկատելի կերպով հետաքրքրուել կաթնատնտեսութեան զարգացումի խնդրով։ Երկրագործութիւնը, այգեգործութիւնը և պարտիզպանութիւնը, թէև տալիս են բաղմատեսակ արմտիք, բայց քիչ են արդիւնաբերում այնպիսի առարկաներ, որոնք մեծ վաճառա-արդիւնագործական նշանակութիւն ունին։

Անմխիթարական է, որ արդիւնահանդէսի նպատակը լաւ չէր հասկացուած երկրի զանազան մասերում։ Մի քանի գործակալներ ջանք էին դրել ոչ այնքան ժողովրդի մէջ հետաքրքրութիւն զարթեցնելու դէպի արդիւնահանդէսի նպատակները, որչտի ժողովել ըստ կարելիութեան բազմաքանակ առարկաներ, չը բացատրելով ըստ այնմ արդիւնաբերողների անունները և ցուցառարկաների ներքին տնտեսական բնաւորութիւնը։ Այդ էր պատճառը, որ շատ ցուցառարկաներ ամենևին գնահատութեան չ'ենթարկուեցին։ Շատ ցուցառարկաներ ուղարկուած էին, չնորհիւ վատ կապելուն և տեղաւորցնելուն, փչացած, խանգարուած դրութեան մէջ, այնպէս որ նոքա կամ հանուում էին գնահատութիւնից կամ իսպառ ոչնչացնում։ Կովկասի մի քանի տեղից ուղարկուած ցուցառարկաների համար նշանակուած էին տիպիսի մեծ գներ, որ նոցա գնող ամենևին չէր կարող լինել արդիւնահանդէսում։ Այդ տեսակ էին ի միջի այլոց Երևան քաղաքից ուղարկածները։ Առհասարակ պէտք է նկատել, որ մի քանի տեղեր, որոնց թւում և Երևանեան նահանդը, որ այնպէս հարուստ է իւր բնութիւնով և ունի աշխատասէր ժողովուրդ, կարծես ձգտել էր իւր ցուցառարկաներով գործել կեղծ աղքատութեան և արդիւնագործական չքաւորութեան տպաւորութիւն։ Ինչ վերաբերում է գեղջկարհեստի առարկաներին, պէտք է ասել, որ թէև ուղարկուած էին մի քանի հազար կտոր արդիւնք, որ պատկանում էին գոնէ 800 անձի, բայց այդ քանակութիւնից շատ քիչն էր ուղարկուած ուղիղ արդիւնաբերողի ձեռքով, այլ ժողովուած էին տեղական վարչութիւնների միջոցով։

Կուչաեւը վերջացնում է իւր կարճ լօդուածը լայտնելով ցանկութիւն, որ արդիւնահանդէսը դառնար գիւղատնտեսներին միմեանց հետ կապելու մի օղ։

Առանձին բաժինների նկարագրութիւնը, որ ներկայացրած է գրքում, արժանի է մանրամասն ուսումնասիրութեան։ Նոցա մասին լիակատար գաղափար կազմելու համար, պէտք է սպասել գրքի երկրորդ հատորին, որ երևի շուտով տպագրութեան կը յանձնի։ Այստեղ առաջ բերենք մի աղիւսակ արդիւնահանդէսի մասնակցածների մասին, որի մանրամասնութիւնները ընթերցողը կը գտնի գրքի մէջ։

	Ընդամենը				
Ազգ.	Անդրկովկ.,	Հիւս. Կովկ.,	Կովկասում,	Կովկ. դուրս,	Համագումարը
Ռուս	204	277	481	18	499
	953	496	1449	57	1506
Հայ	617	9	626	6	632
	1809	32	1841	9	1850
Վրացի	342	1	343	—	353
	960	14	974		974
Թուրք	553	32	585	28	613
	1505	89	1594	129	1723
Գերմանացի	100	39	139	21	160
	360	78	438	67	505
Ֆրանսիացի	28	—	28	—	28
	303		303		303
Յոյն	3	—	3	—	3
	5		5		5
Ընդամենը	1847	358	2205	73	2278
	5895	709	6604	262	6866

Թւանշանները այստեղ նշանակւած են և գծից վերև և գծից ներքև։ Գծից վերևները նշանակում են հանդիսաբեր անձերի թիւը, իսկ գծից ներքևները նոցա ուղարկած ցուցառարկաների թիւը։

Եթէ վարչութիւնների, ոստիկանութեան միջամտութիւնը չը լինէր, արդեօք, ինչ չափով ինչ ազգութիւն մասնակցած կը լինէր արդիւնահանդէսին։

Գլ.

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

---

1) DASHIAN, P. J., Mitglied der Mechitaristen-Congregation in Wien.-Zur Abgar-Sage. (Separatabzug aus der Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, IV. Band, Heft 1, 2, 3).

2) ԳՐԻԳՈՐԵԱՆՑ, ԳՐԻԳՈՐ *քահանայ.—«Զարկեարի քնարը». բանաստեղծութիւններ։ Երկրորդ տպագրութիւն, Բագու, տպարան Տէր-Յովհաննիսեանցի,* 1890 *թ., գինն է* 60 *կոպէկ։*

3) КАЛАНТАРЪ, АЛЕКСАНДРЪ.—„Состоянiе Скотоводства на Кавказѣ". Рогатый скотъ. (Изъ II. тома „Матерiаловъ для устройства казенныхъ пастбищъ и для изученiя скотоводства на Кавказѣ). Тифлисъ, 1890 г. Типографiя А. Михельсона.

4) ՏԷՐ ՍԱՐԳՍԵԱՆՑ, ՄԱԿԱՐ.—*«Հայկական գեղագրութեան օրինակներ։ Ս. Պետերբուրգ,* 1890 *թ. գինն է* 35 *կոպէկ։*

5) ՏԷՐ-ՍԱՐԳՍԵԱՆՑ, ՄԱԿԱՐ.—*«Օժանդակ կրթութիւններ հայկական գեղագրութեան օրինակների»։ Հայոց ուսումնարանների համար։ Երևան,* 1890 *թ., տպարան Էմին Տէր-Գրիգորեանցի, գինն է* 3 *կոպ.*